Հետազոտական աշխատանք

Տիտղոսաթերթ (1 էջ)

Կազմակերպության տվյալներ • Անվանում, հասցե • Տնօրեն • Էլ.հասցե • Հեռախոս	«Մասնակցային դպրոց» կրթական հիմնադրամ Վահրամ Սողոմոնյան masnakcayindproc@gmail.com
Հետազոտության թեմա/վերնագիր • Հետազոտության թեմա	Ինտերակտիվ ուսուցման արդյունավետությունը գրականության դասավանդման ընթացքում
Ուսուցչի տվյալներ • Ա.Ա.Հ. • Մասնագիտություն • Հեռախոս • Էլ. հասցե • Դասավանդվող առարկաներ • Դասարաններ	Հարությունյան Լիլիթ Մելսիկի Մանկավարժ Հայոց լեզու, Գրականություն VI, VII, VIII, IX

Ուսումնական հաստատության տվյալներ ● Անվանումը, հասցե ● Հեռախոս ● Էլ. հասցե (տնօրենության) ● Web կայքի հասցե	՛՛Աբովյանի կրթահամալիր՛՛ ՊՈԱԿ +374 222 2 14 67 abovyanedu@mail.ru

Բովանդակություն

Ներածություն 3
Հետազոտության մեթոդները.....6
Գրականության ակնարկ.....11
Եզրակացություն.....14
Գրականության ցանկ.....16
Հավելված 1.....17

Ներածություն

Սույն աշխատանքի բովանդակությունն է բարելավել գրականության դասավանդման ընթացքը, նպաստել սովորողի մոտ քննադատական

մտածողության, վերլուծական մտածողության, ստեղծագործական մտածողության զարգացմանը: Քննադատական մտածողության նպատակն է վերլուծել փաստերն ու իրադարձությունները: Այս ամենը հնարավորություն է տալիս եզրակացություններ անել, հիմնավորել, մեկնաբանել: Ապահովում է գիտելիքի և մտածողության միջև եղած կապը:Կիրառելի են բաց հարցերը՝ ինչու՞, ի՞նչ հետևանքների է հանգեցնում, ինչպե՞ս եք գնահատում: Կառուցվում է պատճառահետևանքային կապերի տրամաբանական շղթա:

Վերլուծական մտածողությունը սերտորեն կապված է տրամաբանության հետ, անհրաժեշտ է սովորողին տեղեկատվությունը լավ ընկալելու, հիշելու, որոշումներ կայացնելու համար:

Ստեղծագործական մտածողության զարգացման առանձնահատկությունն է հորինել, արտադրել: Սեփական միտքն ունակ է նոր բան ստեղծել:

Անհրաժեշտ է հետևել ինտերակտիվ ուսուցման սկզբունքներին. դրանք են՝

- փոխազդեցությունը
- փոխուսուցումը
- սովորողի ակտիվությունը
- համագործակցությունը
- ինքնարտահայտման խրախուսումը
- հետադարձ կապը

Հաջողված ուսման խնդիրն այն է, որպեսզի անհատը հասնի առավելագույն հաջողությունների: Ինտերակտիվ ուսուցման իրականացման համար հոգեբանական եւ մանկավարժական պայմանները ներառում են `

- անհրաժեշտ գիտելիքների եւ հմտությունների առկայությունը
- դասարանում բարենպաստ հոգեբանական մթնոլորտ, միմյանց օգնելու ցանկություն
- նախաձեռնության խթանում
- յուրաքանչյուր սովորողի անհատական մոտեցում

Կարծում եմ, որ այս ամենի կիրառումը գրականության դասաժամին կնպաստի սովորողների ակտիվ մասնակցությանը դասապրոցեսին , սովորողն ավելի հեշտ կյուրացնի նյութը և կկառուցի սեփական գիտելիքը:

Նպատակը եւ հետազոտական հարցը	Արդյոք ինտերակտիվ ուսուցումը նպաստում է սովորողի քննադատական, վերլուծական, ստեղծագործական մտածողության զարգացմանը
Թեմայի կարեւորությունը եւ նշանակությունը Ձեր/թիրախային խմբի համար	Թեման կարևոր է, քանի որ կնպաստի սովորողների բանավոր խոսքի զարգացմանը: Ուսումնասիրության նպատակն է սովորողների մոտ ձևավորել սահուն խոսք, մտքերն ազատ և անկաշկանդ արտահայտելու կարողություն:
Ո՞ր առանցքային կոմպետենցիային/կարողունակությանն է ուղղված նպատակի ուսումնասիրությունը	Լեզվական գրագիտություն

Վերապատրաստման ո՞ր թեմայի շրջանակում է անդրադարձ կատարվել այս հիմնախնդրին/ոլորտին	՛՛Կարողունակություններ՛՛ թեմայի շրջանակներում

Հետազոտության մեթոդները

Առարկայի նկատմամբ հետաքրքրության առաջացումը հաջողության գրավականն է: Առանց հետաքրքրության գիտելիքը կայուն չէ: Ուսուցիչը պետք է կիրառի արդյունավետ միջոցներ: Առարկան չպետք է դուրս մնա աշակերտի ուշադրությունից: Շատ մեթոդներ դրականորեն ազդում են սովորողի ուսումնական որակի վրա՝ խաղային, դերային միջոցներ, ՏՀՏ միջոցների կիրառումը, գործնական աշխատանքներ, հարցադրում և այլն:

Կիրառելով ժամանակակից մեթոդները՝ պետք է արձանագրվի դասաժամի առավելություններն ու թերությունները մեթոդը կիրառելուց հետո:

Հետազոտության մեթոդների ընտրություն. զանգվածային հարցում, փաստաթղթերի վերլուծություն, դիտարկում

Նախընտրել եմ **փաստաթղթերի** վերլուծության (**նկար, հոլովակ, շարադրություն, կենսագրություն** և այլն), որոշ չափով նաև **դիտարկման** մեթոդները. հավաքագրել եմ տվյալներ՝ տոկոսային հարաբերությամբ:

Տվյալների հավաքագրման ընթացքում կատարել եմ դիտարկում և անկետավորում՝ հետաքրքրության մակարդակը բարձրացնելու համար:

Ներգրավել եմ ժամանակակից տեխնիկաներ, հարցադրումների մեթոդներ, խմբային աշխատանք, քննարկումներ, վերլուծություններ, համեմատություններ, հետաքրքրաշարժ առաջադրանքներ:

Բախվել եմ այն խնդրին, որ աշակերտներն ունեն աղքատիկ բառապաշար, խոսքային դժվարություններ:

Սովորողների հաղորդակցական կարողությունները հիմնականում զարգացնում են դասագրքերում եղած բնագրերը, տեքստային աշխատանքները, վերլուծությունները:

Ուստի գրականության դասը պետք է լինի հետաքրքիր և գրավիչ:

Քերականական գիտելիքներից բացի՝ պետք է աշակերտների մեջ ձևավորել գեղագիտական ճաշակ, իրենց ասելիքը պարզ, հստակ ու գեղեցիկ ներկայացնելու կարողություն:

Իսկ ուսուցչի նպատակը պետք է լինի աշակերտների մեջ ձևավորել անկաշկանդ արտահայտվելու, զրուցելու, վստահորեն սեփական տեսակետն ու կարծիքը արտահայտելու, վերլուծելու, ստեղծագործելու կարողություն: Ամեն կերպ պետք է խթանել ստեղծագործելու ցանկությունը:

Գրականության ուսումնասիրությունը կառուցել եմ հետևյալ սկզբունքներով.

1. Սովորողակենտրոն ուսումնառություն

Սովորողն ինքնուրույն է, աշխատում է ուսուցչի և ընկերների հետ համագործակցելով:

2. Տարբերակված ուսուցում

Հաշվի եմ առել սովորողների անհատական առանձնահատկությունները, պահանջները, կարողությունները:

Խնդիր եմ դրել ձևավորել անհատականություն, որն ունենա լայն աշխարհայացք, հարուստ բառապաշար, կարողանա սահուն և գրագետ խոսել հայերեն, տեսածը և լսածը ճիշտ ընկալել ու վերարտադրել: Աշակերտի մեջ պետք է դաստիարակել սեր հայրենիքի, կյանքի, ծնողների ու ընկերների և առահասարակ մարդու հանդեպ: Գաղափար տալ ազգային ու համամարդկային արժեքների՝ սիրո, գեղեցիկի, ընտանիքի, բարոյականության, բարու, չարի մասին և այլն:

Այս ամենի արդյունքում գրական երկի ուսումնասիրությունը հնարավորություն կտա հասկանալու տեքստի ենթիմաստը, հեղինակի ասելիքը, հերոսների արարքների դրդապատճառները:

Գրական հերոսների արարքների վերլուծությունը հնարավորություն կտա հասկանալու, ճանաչելու ինքն իրեն և այլ մարդկանց, սովորողը կկարողանա կյանքում հարաբերություն հաստատել, ճիշտ հաղորդակցվել, համագործակցել մարդկանց հետ:

Տարբեր ստեղծագործությունների ուսումնասիրումը կհանգեցնի գլխավոր նպատակադրման իրականացմանը՝ բանավոր խոսքի, մտածողության զարգացմանը, կիղկի և կկատարելագործի բանավոր խոսքը:

8-րդ դասարանում սեփական անձի ինքնաճանաչողության, աշխարհաճանաչողության համար մեծ դեր ունի գրականությունը:

Հետազոտության ողջ ընթացքը ներկայացնում եմ տրամաբանական հետևյալ սխեմայի տեսքով.

1) Հետազոտության նպատակի և խնդիրների սահմանում,

2) Հետազոտության իրականացման մեթոդի (մեթոդիկայի) ընտրություն,

3) Փոխներգործուն մեթոդներով ուսուցման արդյունավետություն,

4) Հետազոտության գործընթացի նկարագրություն,

5) Հետազոտության արդյունքների վերլուծություն,

6) Ստացված արդյունքների գնահատում և հետևությունների ձևակերպում:

Փոխներգործուն մեթոդներով ուսուցման նպատակն է, որ ուսումնառության ընթացքում յուրաքանչյուր սովորող կարողանա՝

1. կատարել թիմային աշխատանք, միասնական որոշում ընդունել և պատասխանատվություն կրել.
2. սովորել և սովորեցնել.
3. դրական հարաբերություններ ստեղծել, ձևավորել ամբողջական մրցակցություն.
4. բախումնային իրավիճակներում հավասարակշռված պահվածք դրսևորել.
5. ուսուցման ընթացքում լինել բարեկիրթ, հարգել դասընկերոջ իրավունքները.
6. իրավիճակները դիտարկել և մեկնաբանելտարբեր տեսանկյունից:

Ուսուցիչն ազատ է մեթոդների ընտրության հարցում: Բայց այդ ընտրությունը չի կարող կամայական բնույթ կրել:

Առանձնացված են ուսուցման մեթոդների ընտրության վրա ազդող մի շարք գործոններ:

Ահա դրանցից մի քանիսը.

° ուսուցման նպատակները և խնդիրները,
° բովանդակությունը,
° ուսուցման նյութի քանակն ու բարդությունը,
° սովորողների պատրաստվածության մակարդակը,
° սովորողների շահագրգռվածությունը,
° սովորողների տարիքն ու աշխատունակությունը,
° ուսումնական ժամաքանակը,
° ուսումնական պարապմունքների տիպը և կառուցվածքը:

Հետազոտության ընթացքը

Դասն անցկացրել եմ 8-րդ դասարանում:

Թիրախային խումբ՝ սովորողներ

Աշակերտների քանակը՝ 25 (14տղա,11 աղջիկ)

Դասը վարել եմ համակարգչային դասասենյակում:

Դասի թեման՝ Գաբրիել Սունդուկյանի ՛՛Պեպո՛՛ կատակերգությունը

Դասարանը բաժանել եմ 5 հոգուց բաղկացած խմբերի:

Ծավալուն նյութը բաժանվում էր մասերի, և յուրաքանչյուր խումբ ստացավ առաջադրանք:

Խմբերի ներսում հստակ բաժանել եմ պարտականությունները:

1-ին օրը աշակերտները մեծ ոգևորությամբ ներկայացրին Գաբրիել Սունդուկյանի կենսագրությունը: Արժևորեցին Գ. Սունդուկյանի դերը հայ թատերգության զարգացման բնագավառում, անդրադարձանք, թե ինչ է կտակել Սունդուկյանը մահից առաջ:

Ներկայացրին ՛՛Թիֆլիսը հայոց կյանքում՛՛ ակնարկը:

Անդրադարձանք գրական ստեղծագործություններին (ինչ է գրական սեռը, թատերգությունը, տեսակները, կառուցվածքը և այլն):

Որպեսզի լիարժեք պատկերացում կազմեն 19-րդ դարի հայաշատ Թիֆլիսի մասին, հայ աշխատավորական խավի, հարուստ - աղքատ դասակարգման մասին, հանձնարարեցի դիտել ՛՛Հայֆիլմ՛՛ կինոստուդիայի ՛՛Պեպո՛՛ ֆիլմը:
Սահմանել էի նպատակ՝ բանավոր խոսքի զարգացում: Արդյոք **ինտերակտիվ ուսուցումը** արդյունավետ է:
Կարևորել եմ սովորողների ակտիվությունը, համագործակցությունը, ինքնարտահայտման խրախուսումը:
Դասը կառուցել եմ հետևյալ փուլերով՝ **խթանման** փուլ**, իմաստի ընկալման** փուլ, **կշռադատման** փուլ:
Խթանման փուլում առաջադրվել են ընդհանուր հարցեր կենսագրությունից, ստեղծագործություններից:
Իմաստի ընկալման փուլում անդրադարձել ենք հետևյալ հարցերին.
Ի՞նչ շարժառիթով է գրվել կատակերգությունը:
Կատակերգության հիմնական գաղափարը:
Գործող անձինք:
Դասագրքային էր միայն 2-րդ արարվածը: Աշակերտներն ըստ խմբերի ներկայացրին և բնութագրեցին հերոսներին: Ուշադրություն դարձվեց մենախոսություններին: Պեպոյի և Զիմզիմովի երկխոսությունների դերային բաշխում կատարեցինք: Աշխատեցինք կիրառել բարբառային բառերը: Սովորողներն արտահայտվում էին ազատ, անկաշկանդ, զուգահեռներ էր անցկացվում մեր օրերի հետ (արդյոք մեր օրերում կան պեպոներ, զիմզիմովներ):
Կշռադատման փուլում աշակերտները կազմեցին Տաձև աղյուսակ, նկարագրեցին հարուտ և աղքատ մարդու: Աշակերտներն իրենց տեսակետներն էին արտահայտում՝ ինչպես հարստանալ, ինչպես ճիշտ կառավարել եկամուտները, ովքեր են մերօրյա վաշխառուները, բանկային համակարգի դերը մեր կյանքում, կա՞ դասակարգային պայքար մեր օրերում և այլն:
Աշակերտներն առանձին խմբերով վերլուծեցին, համադրեցին, հակադրեցին, ստեղծագործեցին, ներկայացրին: Անդրադարձ կատարվեց ֆիլմին: Քանի որ համակարգչային դասասենյակում էր անցկացվում դասը, հնարավորություն ստեղծվեց վերադիտել պատառիկներ ֆիլմից և քննարկել:
Աշակերտների 85%- ի մոտ ինտերակտիվ ուսուցման եղանակը դրական ազդեցություն էր թողել: 25%-ի մոտ պասիվությունը շտկվեց առաջադրանքների պարզեցումով և դասընկերների փոխօգնության շնորհիվ:
Խմբային աշխատանքների ժամանակ յուրաքանչյուր աշակերտ իր ներդրումն ուներ և պատասխանատվություն էր կրում:
Դասը աշակերտակենտրոն էր, կարևորվում էր յուրաքանչյուր աշակերտի կարծիքն ու տեսակետը: Որոշ քննարկումներ վեր էին ածվում բանավեճի: Հատուկ ուշադրություն էր դարձվում ժամանակի արդյունավետ կառավարմանը: Առաջադրանքները ներկայացվում էին տրված ժամանակահատվածի սահմաններում:

Խմբերը խրախուսվեցին և գնահատվեցին ըստ ցուցաբերած ակտիվության:

Գրականության ակնարկ • Մեջբերումներ արդեն արված հետազոտություններից, • Մեջբերումներ գրականությունից, տեղեկության վստահելի աղբյուրներից: **<u>Պարտադիր է կատարել հղում աղբյուրին</u>**	Վերջին տարիներին հաճախ են հակադրում ուսուցման ավանդական և ինտերակտիվ մեթոդները, ուսուցչակենտրոն և աշակերտակենտրոն մոտեցումները: Ընդ որում՝ այդ հակադրումը կատարվում է այն համատեքստում, որ ինտերակտիվ և աշակերտակենտրոն մոտեցումները բացարձակապես լավն են, իսկ ավանդական և ուսուցչակենտրոն մոտեցումները՝ վատ: Ինտերակտիվ մոտեցումներն անհրաժեշտ են աշակերտներին մոտիվացնելու, ուսուցումը հետաքրքիր ու մասնակցային դարձնելու համար: Հարց ու պատասխանը, նյութը վերհիշելը, վարժանքները, ուսուցչի բացատրական խոսքը այսօր էլ կարևոր են ու անհրաժեշտ ուսուցման համար: Բավականին արդյունավետ է դասի սկզբում որոշակի սկզբնաղբյուրի օգտագործումը: Դա կարող է լինել

	աֆորիզմ, թևավոր խոսք կամ նույնիսկ ինտրիգ՝ այդ ձևով տալով նախագիտելիք, ստեղծելով պրոբլեմային իրավիճակ, աշխատանքային տրամադրություն: https://library.fes.de/pdf-files/bueros/georgien/16023.pdf 15.09.22 Ակտիվ ուսուցման մեթոդները (փոխգործուն մեթոդները) նպաստում են երեխաների ազատ և ինքնուրույն մտածելու, սեփական կարծիք հայտնելու, պատասխանատու որոշումներ կայացնելու, ընտրություն կատարելու հմտությունների զարգացմանը, ճանաչողական գործընթացում ինքնուրույն կողմնորոշմանը: Այդ մեթոդները զույգերով, խմբով մտավոր աշխատանքի եղանակներն են՝ ուղղված համատեղ որոնումների և մտորումների քննարկմանը, ընդհանուր որոշումների կայացմանն ու իրագործմանը: Ուսուցման փոխգործուն մեթոդները համապատասխանում են երեխայակենտրոն ուսուցման սկզբունքներին և արդյունավետ են: Փոխգործուն մեթոդները բացառում են որևէ մեթոդի առաջնայնությունը, գերակայությունը, ինչպես նաև մեկ մեթոդի գերակշռությունը մյուսների նկատմամբ: Փոխգործուն ուսուցման սկզբունքներն են. — փոխազդեցությունը, փոխուսուցումը, — երեխայի ակտիվությունը, — համագործակցությունը, — ինքնարտահայտման խրախուսումը, — հետադարձ կապը: Փոխգործուն մեթոդների առանձնահատկություններն են. — երեխայի իմացական գործընթացների կազմակերպումը,

	— հետաքրքրությունների բացահայտումը, — համագործակցային կարողությունների զարգացումը, — անհատական առանձնահատկությունների բացահայտումը, — հաղորդակցական ունակությունների ձևավորումը, — տրամաբանական մտածողության զարգացումը, — ինքնուրույնության խրախուսումը, — վերլուծական կարողությունների ձևավորումը: Փոխգործուն մեթոդների արդյունավետ կիրառման ընդհանուր բանաձևեր չկան: Ցանկացած խումբ, պարապմունք եզակի է և անկրկնելի: Ուսուցչի խնդիրն է ընդհանուր սահմանված մեթոդը հարմարեցնել կոնկրետ իրավիճակին, իր ունեցած մեթոդական զինանոցից ընտրել համապատասխան մեթոդը՝ ելնելով իրականացվող աշխատանքի նպատակներից: https://emmagabrielyan.wordpress.com/2019/11/19/%D5%B8%D6%82%D5%BD%D5%B8%D6%82%D6%81%D5%B4%D5%A1%D5%B6-%D5%B4%D5%A5%D5%A9%D5%B8%D5%A4%D5%B6%D5%A5%D6%80/ 15.09.22
Օգտագործված մեթոդները, գործիքները	Դասագիրք, սահիկաշար, տեսաֆիլմ

Իրականացման ժամանակահատվածը	5.09- 15.0 9
Թիրախ խումբը և շրջանակը /քանակ, սեռային բաշխում/	Աշակերտներ՝ 8-րդ դասարան 25 14 տղա 11 աղջիկ

Վերհանված արդյունքներ, եզրակացություններ, պատասխան հետազոտական հարցին	Այսպիսով, ո՞րն էր գրականության դերը, նշանակությունը մարդու կյանքում: Կան տարաբնույթ և տարատեսակ կարծիքներ: Աշակերտները հասկացան , որ գրականությունը աշխարհը հասկանալու միջոց է, այն օգնում է հասկանալ՝ ինչ է լավը, ինչ է վատը: Գրականությունը ջնջում է ժամանակի սահմանները, մեզ ծանոթացնում է տարբեր դարաշրջանների ոգուն,տարբեր սոցիալական միջավայրների կյանքին: Այն հարստացնում է բառապաշարը ,

	զարգացնում է ուղեղը: Գրականությունն արտացոլում է կյանքը: Գրական յուրաքանչյուր երկի ուսումնասիրումը կյանքի դաս է: **Հետազոտության թեման էր, թե որքանով է կարևոր ինտերակտիվ ուսուցումը:** **Իսկ հարցն էր, թե ինտերակտիվ ուսուցումը կնպաստի արդյոք աշակերտի վերլուծական, քննադատական, ստեղծագործական մտածողության զարգացմանը:** Վերլուծելով, համադրելով փաստերը, ուսումնասիրությունները, եկա այն եզրահանգման ,որ ,այո, ինտերակտիվ ուսուցումը ճիշտ ընտրված մեթոդների շնորհիվ հուսալի է, արդյունավետ, իրական, արդարացնում է դրված նպատակը:
Այլ տեղեկատվություն	https://library.fes.de/pdf-files/bueros/georgien/16023.pdf 15.09.22

Օգտագործված գրականության ցանկ

https://library.fes.de/pdf-files/bueros/georgien/16023.pdf

1.Գաբրիել Սունդուկյան ՛՛Պեպո՛՛ Կատակերգությունը

2.Դասագիրք Գրականություն 8-րդ դասարան

3.Գ. Հ. Կիրակոսյան ՛՛Հայ գրականության դասավանդման մեթոդիկա՛՛

4.Հայոց լեզու և գրականություն, գիտամեթոդական հանդես, 2016թ.

5. Պետրոսյան Հ., Մանկավարժական ժամանակակից տեխնոլոգիաներ, Երևան

Հավելված 1

Հաշվետվության կցված նյութեր ● Հետազոտության գործիքներ (հարցաթերթիկներ կամ այլ) ● Նկարներ ● Արդյունքներ	Հետազոտության արդյունքներից հետո կազմել եմ հարցաթերթ , հստակ նշել եմ մեթոդների դրական և բացասական կողմերը, աշակերտների ակտիվության և պասիվության մասին գրառումներ եմ արել: